«ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ»-Ի

խմբագրությանը

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահությունը ջերմորեն ողջունում է «Պատմա-բանասիրական հանդես»-ի խմբագրությանը՝ «Հանդես»-ի լույս ընծայման 10-ամյակի կապակցությամբ։

Իր շուրջը համախմբելով Հայաստանի ու Սովետական Միության գիտնականներին, ինչպես նաև արտասահմանյան երկրների հայ և այլազգի առաջավոր հայագետներին, «Հանդես»-ը իր գոյության 10 տարիների ընթացքում արդյունավետ աշխատանք է կատարել հայ ժողովրդի պատմության, գրականության, լեզվի, արվեստի, փիլիսոփայության և մշակույթի այլ բնագավառների հարցերի և չլուսաբանված մի շարք պրոբլեմների քննարկման ու լուծման գործում, իր էջերում լուսաբանել է հայագիտության և կովկասագիտության տեսական խնդիրներ, ընդհանուր պատմագրության ու բանասիրության հարցեր, հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական և մշակութային կապերը այլ ժողովուրդների հետ, Սովետական Հայաստանի գիտության ու մշակույթի նվաճումները, սփյուռքահայ գիտական, հասարակական-քաղաքական ու մտավոր կյանքը։

Կատարված արգասավոր աշխատանքի շնորհիվ «Հանդես»-ը դարձել է հայագիտության կարևորագույն օրգանը, արժանանալով համաշխարհային ճանաչման։

Գիտությունների ակադեմիայի նախագահությունը հետագա հաջողություններ է մաղթում «Պատմա-բանասիրական հանդես»-ի խմբագրությանը՝ իր առջև կանգնած գիտական լուրջ խնդիրների առավել հաջող կատարման գործում։

ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ,
Ակադեմիկոս-քարտուղար Գ. Ս. ԴԱՎԹՅԱՆ

Այս համարով «Պատմա-բանասիրական հանդես»-ը բոլորում է իր գոյության տասնամյակը:

Անցած տասն տարիների ընթացքում «Հանդես»-ը իր էջերում քննարկել է հայ ժողովրդի պատմության, լեզվի, գրականության, արվեստի, փիլիսոփայության և մշակույթի այլ բնագավառների հարցեր, հայագիտության տեսական խնդիրներ, լուսաբանել է հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական ու մշակութային կապերը մյուս ժողովուրդների հետ, Սովետական Հայաստանի գիտական ու մշակութային նվաճումները: Գիտական քննարկումների ու բանավեճերի բաժնում տպագրված հոդվածները իրանել են ստեղծագործական բանավեճերի ծավալմանը, գիտական հարցերի մարքսիստական-լենինյան լուսաբանությանը:

Իր առջև դրված խնդիրները հաջողությամբ կատարելու համար «Հանդես»-ի խմբագրությունը աշխատել է իր շուրջը համախմբել Հայաստանի, Սովետական Միության և արտասահմանյան տարբեր երկրների՝ հայագիտությամբ և նրան առնչվող հարցերով զբաղվող առաջավոր գիտնականներին և համատեղ ջանքերով առաջ մղել հայ ժողովրդի պատմության ու մշակույթի ուսումնասիրությունը: Խմբագրությունը հատուկ ուշադրություն է դարձրել հայագիտության հանգուցային ու այժմեական հարցերին նվիրված հոդվածների ու հաղորդումների հրապարակմանը: «Հանդես»-ում զգալի տեղ են գտել աղբյուրագիտական աշխատությունները, հնագիտական պեղումների արդյունքները, հին մատենագրական բնագրերի, արխիվային փաստաթղթերի և ականավոր հայագետների անտիպ ուսումնասիրությունների հրապարակումները: «Հանդես»-ի էջերում գրախոսվել են Սովետական Միության մեջ և արտասահմանում լույս տեսած կարևորագույն հայագիտական աշխատությունները: «Հանդես»-ը իր ընթերցողներին լայնորեն ծանոթացրել է Սովետական Հայաստանի գիտահետազոտական հիմնարկների աշխատանքներին, գիտության, գրականության, արվեստի նվաճումներին, սովետական և արտասահմանյան հայագետ պատմաբանների, գրականագետների ու արվեստագետների գործերին, սփյուռքահայ գիտական, հասարակական-քաղաքական ու մտավոր կյանքին:

Անցած տասնամյակը նշանավորվեց ինչպես մեր մեծ հայրենիքի, այնպես էլ Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության, մշակույթի և գիտության բուռն վերելքով: Այդ տարիներին մեր հանրապետությունում գիտության մյուս հյուղերին զուգընթաց խոշոր չափով զարգացան նաև հասարակական գիտությունները. առաջադրվեցին ու ուսումնասիրվեցին նոր պրոբլեմներ, հրատարակվեցին բազմաթիվ սկզբնաղբյուրներ, նշանակալից հետազոտություններ, որոնցից շատերը արժանացել են գիտական լայն ճանաչման: Արդեն կարելի է խոսել հայագիտության զարգացման մի նոր, բարձր աստիճանի մասին: Այդ հանգամանքը, իր հերթին, մեր պարբերականի առաջ դնում է նոր լրացուցիչ խնդիրներ, որոնց լուծմանն էլ նվիրված են լինելու «Հանդես»-ի խմբագրության հետագա ջանքերը: